

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ  
 ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
 (1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. մարտ)

1918 թ. մայիսին Հայաստանի և Վրաստանի անկախ հանրապետությունների ստեղծումից հետո մինչ այդ հասարակական ու կուսակցական մակարդակներով Անդրկովկասի վարչատարածքային վերաբաժանման շուրջ ընթացող քննարկումները վերաճեցին միջպետական սահմանային վեճի և հակամարտության: Մահմանավեճի հիմնական պատճառը Թիֆլիսի նահանգի մեջ մտնող Ախալքալաքի և Բորչալուի գավառների պատկանելության հարցն էր: 1918 թ. հունիսի սկզբին սահմանների շուրջ սկսված հայ-վրացական բանակցությունները հաջողություն չունեցան, իսկ հուլիսի 17-ին Հայոց ազգային խորհրդի և ՀՀ կառավարության՝ Թիֆլիսից Երևան տեղափոխվելուց հետո առժամանակ ընդհատվեցին:

Հայ-վրացական հակամարտությունը կրկին սրվեց 1918 թ. հոկտեմբերին՝ համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից և ռազմակալված Ախալքալաքն ու Բորչալուն թողնելուց հետո: Դիվանագիտական հակամարտությանը դեկտեմբերի 13-ին հաջորդեց երկշաբաթյա հայ-վրացական պատերազմը: Պատերազմը դադարեցնելու նպատակով Անդրկովկասում դաշնակիցների գործերի հրամանատար Ու. Թոմսոնը ռազմական գործողությունների վայր ուղարկեց իր ներկայացուցիչ կապիտան Է. Գրինին, որը դեկտեմբերի 15-ին Հայաստանի իշխանություններին առաջարկեց 14 օրով զինադադար հաստատել: Կապիտան Գրինի և վրացական պատվիրակների հետ ռազմական գործողությունները դադարեցնելու պայմանները որոշելու նպատակով դեկտեմբերի 16-ին ՀՀ կառավարությունը Հայաստանի խորհրդի անդամ Մարտիրոս Հարությունյանի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկեց Ղարաքիլիսա: Սակայն վրացական կառավարությունը պատվիրակներ չուղարկեց, և Գրինի առաքելությունը անհաջողությամբ ավարտվեց\*: Մ. Հարությունյանի պատվիրակությունը դեկտեմբերի 29-ին Ղարաքիլիսայում ստորագրեց դաշնակիցների առաջարկած զինադադարի համաձայնագիրը. դեկտեմբերի 31-ին դադարեցին ռազմական գործողությունները: Այնուհետև ուղևորվելով Թիֆլիս՝ պատվիրակությունը հայ-վրացական հարաբերություններում եղած վիճելի հարցերը կարգավորելու համար ջանքեր գործադրեց ինչպես 1919 թ. հունվարի 9–17-ը Թիֆլիսում տեղի ունեցած կոնֆերանսի, այնպես էլ դաշնակիցների և վրացական իշխանությունների հետ բանակցությունների ընթացքում, սակայն մեծ առումով հաջողության չհասնեց. Ախալ-

\* Տե՛ս Կ. Ս ա ռ ղ ա թ յ ա ն. *Հայ-վրացական հարաբերությունները 1918–1921 թթ.*, Երևան, 2002, էջ 81–83:

քալաքում մտցվեց վրացական վարչակարգ, իսկ հայկական զինված ուժերի կողմից պատերազմի ժամանակ ազատագրված Լոռին վերածվեց «Չեզոք գոտու»՝ դաշնակիցների հսկողության տակ:

Հրապարակվող փաստաթուղթը հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության 1919 թ. ապրիլի 7-ի ընդարձակ զեկուցում-հաշվետվությունն է: Այն ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի կողմից ապրիլի 24-ին մակագրվել է Արտգործնախարարությանը: Չեկուցագիրը համընդհանուր պատկերացում է տալիս պատվիրակության գործունեության, կոնֆերանսի աշխատանքների, անգլիական ներկայացուցիչների վրացամետ կեցվածքի վերաբերյալ, ինչը շատ առումներով կանխորոշեց բանակցությունների ելքը: Այն տեղեկություններ է պարունակում նաև հայ-վրացական պատերազմի և հաջորդող շրջանում Վրաստանում հայերի նկատմամբ որդեգրված խտրական քաղաքականության մասին: Փաստաթուղթը պատմականից բացի ունի գործնական նշանակություն. զեկուցագրի մեջ կատարված իրավիճակի նկարագրությունը, բերված տեսակետներն ու մոտեցումներն իրենց թարմությունը և արդիականությունը պահպանել են մեր օրերում ևս ու կարող են օգտակար լինել Անդրկովկասի մերօրյա տարբեր խնդիրների ընկալման տեսակետից:

Հրապարակվող փաստաթղթում պահպանել ենք վերնագիրը և ենթավերնագրերը, լեզվառճական միջամտություն չենք կատարել. կրճատ բառերը լրացրել և անհրաժեշտ բառերն ավելացրել ենք ուղղանկյուն փակագծերում, նաև կատարել ենք կետադրական և ուղղագրական շտկումներ:

Չեկուցագրի ձեռագիր բնագիրը պահվում է Հայաստանի ազգային արխիվի Հայաստանի առաջին հանրապետության արտգործնախարարության ֆոնդում (Ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 179–216):

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ  
1918 թ. ԴԵԿՏ[ԵՄԲԵՐԻ] 19 – 1919 թ. ՄԱՐՏԻ 19

7 ապրիլի 1919 թ.  
Երևան

*Ստանալով կապիտան [Է.] Գրինի առաջարկը՝ Հայաստանի կառավարությունը որոշեց պատերազմական գործողությունները դադարեցնելու համար մի պատվիրակություն ուղարկել կովի ճակատը:*

*Պատվիրակության կազմն էր՝  
նախագահ՝ Մարտիրոս Հարությունյանց,  
անդամներ՝ Սմբատ Խաչատրյան,  
Գրիգոր Տեր-Խաչատրյան,  
Արշամ Խոնդկարյան,*

*Մտեփան Մամիկոնյան<sup>1</sup>,*

*զինվորական խորհրդական՝ գեն[երալ Գաբրիել] Կորգանով:*

*Պատվիրակությունն ուներ մանդատ՝ դադարեցնելու թշնամական գործողությունները, հարթելու հայ-վրացական կոնֆլիկտը և երկաթուղային նորմալ հաղորդակցություն հաստատելու: Պատվիրակությունը լիազորված էր Հայաստանի կառավարության անունից ստորագրելու վերոհիշյալ նպատակների համար անհրաժեշտ պայմանագրեր:*

*1918 թվի դեկտ[եմբերի] 19-ին Երևանից ճանապարհվելով՝ պատվիրակությունը դեկտ[եմբերի] 22-ին հասավ Ղարաքիլիսա (ցերեկվա ժամը 1-ին): Այս 1919 թ. հունվարի 1-ից նա իր գործունեությունը փոխադրեց Տփլիսիս, ուր իր գործերն ավարտեց և գերի մնացածներին հանձնեց՝ Հայաստանի դիվանագիտական միսիային 1919 թվի մարտի 19-ին: Այսպիսով՝ նրա աշխատանքները տևեցին ուղիղ երեք ամիս: Այդ ժամանակամիջոցում պատվիրակությունը Ղարաքիլիսայում ստորագրել է զինադադարի պայմանները, իսկ Տփլիսում՝ դաշնակիցների մասնակցությամբ կայացած հայ-վրացական կոնֆերանսի և ապա զուտ հայ-վրացական խորհրդակցության որոշումները: Հունվարի մեկից մինչև մարտի 15-ը Տփլիսում նա հանդիսացել է Հայաստանի ներկայացուցչություն՝ մինչև որ վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի և Վրաստանի միջև, որից հետո Հայաստանի ներկայացուցչությունն անցել է Հայաստանի դիվանագիտական միսիային:*

*Ինչպես կառավարությունը, նույնպես և պատվիրակությունը ենթադրում էին, որ կապ[իտան Է.] Գրինը նույնանման առաջարկ արած կլինի նաև Վրաստանին, ուստի կա՛մ Ղարաքիլիսայում, կա՛մ մի այլ տեղ՝ ռազմաճակատին մոտ, տեղի կունենա հանդիպումը հայոց և վրաց պատվիրակությունների, որոնք և համաձայնության կզան զինադադարի պայմանների մասին: Սակայն դեկտ[եմբերի] 26-ին տեղեկացանք, որ դաշնակից հրամանատարությունը զինադադարի առաջարկություն է արել որոշ պայմաններով, որ մշակել են անգլ[իական] գեներալ [Ու.] Ռայկրոֆտը և ֆրանսիական գնդապետ [Պ.] Շարդինին՝ համաձայնությամբ Վրաստանի կառավարության նախագահ [Ն.] Ժորդանիայի և հակառակ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ [Ա.] Ջամայանի բողոքի<sup>3</sup>: Միաժամանակ տեղեկացանք, որ մի միջազգային կոմիսիա գալիս է ռազմաճակատ: Կարծե-*

<sup>1</sup> Պատվիրակության բոլոր հինգ անդամները Հայաստանի խորհրդի պատգամավորներ էին: Մ. Հարությունյանն ու Ս. Խաչատրյանը՝ դաշնակցական, Գ. Տեր-Խաչատրյանը՝ ժողովրդական, Ա. Խոնդկարյանը՝ սոցիալիստ-հեղափոխական (էսէռ) կուսակցությունների անդամներ էին, Ս. Մամիկոնյանը՝ անկուսակցական:

<sup>2</sup> Հավանաբար, խոսքը պատերազմական գերիների մասին է:

<sup>3</sup> Ըստ այդ առաջարկության՝ «Վրացական գործերը կկանգնեն այն սահմանի վրա, որտեղ այժմ նրանք գտնվում են, հայկական գործերը պետք է հետ քաշվեն թուրքական գծի վրա, այսինքն՝ Ջալալօղլի: Մեծբրիտանական պահակները պետք է լինեն երկաթուղագծի այն մասերի վրա, որոնք պետք է լինեն վրացական և հայկական գործերի միջև: Այս վիճելի հողամասում վարչությունը կլինի խառը: Ախալքալաքի գավառում վրացական վարչությունը պիտի ունենա դաշնակիցների մի հանձնաժողով, որի մեջ կմտնեն և տեղական հայ և թուրք ազգաբնակչության ներկայացուցիչները» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 33, թ. 1):

լով, որ եկող կոմիսիային պիտի հանդիպենք ռազմաճակատում՝ Այրում կամ Սադախլո կայարանում, պատվիրակությունը մեկնեց ռազմաճակատ: Սակայն Այրում կայարանում տեղեկանալով, որ կոմիսիան արդեն հասել է Դիլիջան և գալիս է Ղարաքիլիսա, պատվիրակությունը վերադարձավ և միայն դեկտեմբերի 28-ի երեկոյան առաջին անգամ տեսնվեց կոմիսիայի հետ:

Միջազգային կոմիսիայի անդամներն էին՝ անգլիացի կապիտան [Հ.] Դուգլասը, ֆրանսիացի կապիտան [Ն.] Գասֆիլդը, վրացի գնդապետ Ջափարիձեն և մի ռուսախոս անգլիացի սպա իբրև թարգման: Սոցա հետ եկած էր նաև իբրև ճանապարհորդ Արշակ Ջամայանը:

Կոմիսիան իր հետ բերել էր գեներալ [Ու.] Ռայկրոֆտի և գնդապետ [Պ.] Շարդինիի որոշումները զինադարի մասին և բրիտանական հրամանատարությունից հրահանգ ուներ այդ պայմաններն անփոփոխ մեզ ստորագրության առաջարկելու: Մեզ առաջադրված պայմաններն այնքան անարդար էին և այնքան միակողմանի, որ պատվիրակությունն անկարող էր առանց այլևայլության ստորագրել: Ուստի նախքան պաշտոնական նիստը մենք կարևոր համարեցինք մի մասնավոր տեսակցություն ունենալ միջազգային կոմիսիայի եվրոպացի անդամների հետ: Այդ տեսակցությունը, որ տեղի ունեցավ դեկտեմբերի 29-ին, առավոտյան ժամը 11-ին Ղարաքիլիսայի երկաթուղային կայարանում՝ պատվիրակության վազոնի մեջ, տևեց չորս ժամ: Ներկա էին կապիտան [Հ.] Դուգլասը, կապիտան [Ն.] Գասֆիլդը, անգլիացի թարգման սպան, մեր պատվիրակության բոլոր անդամները, գեներալ [Գ.] Կորգանովը, գեներալ [Մ.] Միլիկովը և կապիտան Ա. Պուլադեբարը<sup>4</sup>: Չորս ժամվա խոսակցության մեջ մենք պարզեցինք մեր տեսակետը, բացատրեցինք որոշումների անարդարությունը. խնդրեցինք պայմանները փոխել այնպես, որ հավասար դրություն ստեղծվի վրացիների և մեզ համար ինչպես Լոռիում, այնպես էլ Ախալքալաքի գավառում. կա՛մ մեր զորքերը չհեռացնել Բորչալուից, կա՛մ թե հեռացնել նաև վրացիներին Ախալքալաքից: Բայց մեր բոլոր պատճառաբանություններն ու ջանքերն ապարդյուն անցան. [Հ.] Դուգլասը, որ իսկապես մենակ էր վճռում խնդիրները, չհամաձայնեց որևէ փոփոխություն մտցնել պայմանների մեջ՝ պատճառաբանելով, որ լիազորություն չունի այդ անելու: Այնուհետև մենք առաջարկեցինք ստորագրել ոչ թե Ղարաքիլիսայում անմիջապես, այլ գնալ Տիֆլիս, առաջադրել դաշնակից հրամանատարությանը մեր պահանջները, բացատրություններ տալ և ապա ենթարկվել նրա վճռին, ինչպես էլ լինի այդ վճիռը: Մեր բոլոր խնդիրներին և առարկություններին [Հ.] Դուգլասը միայն պատասխանում էր, որ լիազորություն չունի որևէ փոփոխություն մտցնելու պայմանների մեջ և մեզ առաջարկում էր կա՛մ ստորագրել, կա՛մ մերժել, կա՛մ կոնտրա-առաջարկ անել: Միաժամանակ նա մի քանի անգամ կրկնեց, որ մերժելով մենք պատճառ ենք դառնում, որ արյունահեղությունը շարունակվի և հակառակ ենք գնում դաշնակիցների կամքին, որի համար պատասխանատու կմնանք նոցա առաջ: Հաճախ նաև կրկնում էր, թե ինքն էլ նկատում է, որ որոշումները հապճեպ են արված, գուցեև անարդար են, բայց անհրաժեշտ է ստորագրել, որպեսզի կռիվն

<sup>4</sup> Հայաստան ժամանած ֆրանսիական ներկայացուցիչը:

անմիջապես դադարի, երկաթուղային հաղորդակցությունը սկսվի, քանի որ դա պահանջում է հայերի շահը և, առհասարակ, ինչպես ապագայում կպարզվի, ամեն բան արվում է հայերի շահի տեսակետից:

Սյնուհետև մենք սկսեցինք մատնանշել առաջարկված պայմանների մեջ անորոշ և անհասկանալի կետերը. օրինակ՝ հայոց և վրաց գառնիզոնների<sup>5</sup> քանակը և տեղը, Լոռու խառը վարչության անորոշությունը, Ախալքալաքում միջազգային վերահսկիչ մարմնի կազմի թերությունը և այլն: Կապիտան [Հ.] Դուզլասն ընդունեց, որ մեր դիտողություններն իրավացի են, որ ինքն էլ անկարող է բացատրել այդ կետերին վերաբերվող մանրամասնությունները: Ուստի միակ զիջումը, որ նա կարող է անել, դա այն է, որ ստորագրելուց հետո նա պատվիրակության անդամներին իր հետ կտանի Տփլիս՝ այդ անորոշ կետերի պարզաբանությունը ստանալու համար: Եվ եթե պատվիրակությանը հաջողվի այնտեղ հասնել և այլ կետերի վերաքննությունը հաջողեցնել, նա դրա դեմ ոչինչ չունի:

Արդեն մեզ համար պարզվեց, որ մնում էր կա՛մ ստորագրել, կա՛մ մերժել: Ուղիղ հեռագրալարով կառավարությունը մեզ շարունակ հորդորում էր նկատի առնել մեր գործի պարենավորման ծանր կացությունը, հակառակ չզնալ դաշնակիցների կամքին: Վերջնական մի որոշում ընդունելուց առաջ պատվիրակությունը կարիք զգաց խորհրդակցել կառավարության հետ: Ուստի, կոմիսիայի հետ պաշտոնական տեսակցությունը երեկոյան ժամը 9-ին նշանակելով, պատվիրակությունը ուղիղ հեռագրալարով կապվեց կառավարության հետ: Ստեղծված վիճակը բոլոր մանրամասնություններով հաղորդելով կառավարությանը՝ նրանից ստացանք հետևյալ պատասխան հրահանգը. «Մեկնելով այն համոզմունքից, որ պատերազմը դարձյալ շարունակելը կարող է առաջ բերել դրության վատացում, միևնույնիստների խորհուրդը միաձայն որոշում է առաջարկել պատվիրակությանը ([Մ.] Հարությունյանի նախագահությամբ) կապիտան [Հ.] Դուզլասի նախագահությամբ կոմիսիային տալ հետևյալ պատասխանը. չցանկանալով շարունակել արյունահեղությունը, ընդառաջ գնալով համաձայնության պետությունների ցանկությանը պատերազմի շուտափույթ վախճանի մասին և երկաթուղային հաղորդակցության վերականգնման մասին՝ Հայաստանի կառավարությունը համաձայնություն է հայտնում անգլո-ֆրանսիական միսիայի առաջարկին՝ դադարեցնելու պատերազմական գործողություններն այն պայմաններով, որ մշակել է միսիան: Միաժամանակ, Հայաստանի կառավարությունը, նկատելով, որ այդ պայմանները մշակված են առանց նրա լիազորված ներկայացուցիչների մասնակցության, ցանկություն է հայտնում, որպեսզի պայմանները վերաքննվեն Հայաստանի կառավարությունից լիազորություն ունեցող անձանց մասնակցությամբ: Սակայն այս ցանկության կատարումը չպետք է դադարեցնի անգլո-ֆրանսիական միսիայի առաջարկած պայմանների իրագործումը»:

Կառավարության այս բանաձևն արդեն վճռում էր հարցը: Եվ երբ ուշ գիշերին մենք տեսնվեցինք կոմիսիայի հետ և պարզվեց, որ նա պատրաստվում է հաջորդ օրը՝ դեկտեմբերի 30-ին, առավոտյան մեկնել Տփլիս, այլևս մեզ բան չէր մնում,

<sup>5</sup> Կայագործների:

քան համաձայնել և ստորագրել, իսկ մի քանի կետերի պարզաբանության համար գնալ Տփխիս:

Ստորագրելուց առաջ պատվիրակության նախագահն ասաց մոտավորապես հետևյալը. «Չորս տարի շարունակ մեր ժողովուրդը կռիվ մղելով դաշնակիցների շարքում ընդհանուր թշնամու դեմ և անասելի գոհեր տալով՝ աչքը հառած սպասում էր դաշնակիցների գալուն և նրանց օգնությանը: Այժմ, երբ մենք դարձյալ կռվում ենք մեր արդար իրավունքների համար, իսկ դաշնակիցներն արդեն մեզ մոտ են, մեզ առաջարկում են զինադադարի այնպիսի պայմաններ, որոնք կատարելապես ոտնահարում են մեր իրավունքները և ինքնասիրությունը: Բայց միայն հարգելով մեր մեծ դաշնակիցների խոսքը և վստահ, որ նրանց ցանկությունն ի վնաս մեզ չի լինի և չուզենալով պատճառ դառնալ, որ արյունահեղությունը շարունակվի, համաձայնում ենք ստորագրել զինադադարի այս պայմանները»: Կապ[իտան] [Հ.] Դուզլասն իր գոհունակությունը հայտնեց մեր պատվիրակության այս դիրքի հանդեպ և ասաց, որ կհեռագրի դաշնակից հրամանատարությանն այն մասին, որ Հայաստանի կառավարությունը երևան բերեց ամենալայն մեծահոգություն և խաղաղության անկեղծ ցանկություն: Նա համաձայնեց իր հետ վերցնել պատվիրակությունից միայն երկու անձ՝ մի զինվորական և մի քաղաքացիական անձ: Պատվիրակությունը որոշեց ուղարկել նախագահին և գեն[երալ Գ.] Կորգանովին: Իսկ պատվիրակության մյուս անդամների համար անցաթուղթ առանք կոմիսիայից, որպեսզի նոքա առաջին հնարավորության դեպքում ճանապարհով են Տփխիս:

Պատվիրակության նախագահը և գեներալ [Գ.] Կորգանովը դեկտ[եմբերի] 30-ի կեսօրին Ղարաքիլիսայից մեկնելով՝ հասան Տփխիս դեկտ[եմբերի] 31-ի երեկոյան ժամը 8-ին: Հունվարի 1-ի առավոտյան ժամը 11-ին նոքա ներկայացան դաշնակից հրամանատարության շտաբին, որ գտնվում էր «Օրիանտ» հյուրանոցում: Գլխավոր ներկայացուցիչն էր գնդապետ [Ռ.] Ջորդանը, որ եկել էր Բաքվից՝ գեներալ [Ու.] Թոմսոնի բանակից: Այդտեղ էր նաև մայոր Կեմբելը, որը գեներալ [Զ.] Ուոկերի շտաբի քաղաքական մասի վարիչն էր: Այսպիսով, դա այն շրջանն էր, երբ Բաքվի բանակն Արևմտյան Անդրկովկասի գործերը հանձնում էր գեներալ [Զ.] Ֆորեստիե-Ուոկերի բանակին: Մի քանի օրից հետո գնդապետ [Ռ.] Ջորդանն իր սպաներով մեկնեց Բաքու՝ նոցա հետ նաև կապիտան [Հ.] Դուզլասը և հայվրացական հարաբերությունների գործն անցավ գեն[երալ Զ.] Ուոկերի բանակի հրամանատարությանը: Մենք այնուհետև գործ ունեինք գեներալ [Զ.] Ուոկերի, մայոր Կեմբելի և կոնֆերանսի նախագահ գնդապետ [Ռ.] Սոյուարտի հետ: «Օրիանտ» հյուրանոցի տեսակցությանը ներկա էր նաև ֆրանսիական զինվորական միսիայի պետ գնդապետ [Պ.] Շարդինին, նաև կապիտան [Ն.] Գասֆիլդը, բայց արդեն պարզ էր, որ ֆրանսիական սպաները հանդիսանում էին միայն իբրև աջակիցներ, իսկ մեր գործերի, ինչպես և ամբողջ անդրկովկասյան խնդիրների տնօրինողը բրիտանական զինվորական միսիան էր:

Կապիտան [Հ.] Դուզլասը հայկական պատվիրակներին ներկայացրեց գնդ[ապետ Ռ.] Ջորդանին, գնդ[ապետ Պ.] Շարդինին և մայոր Կեմբելին, որոնց և հայտնեցինք մեր գալու նպատակը: Մեր անձեռնմխելիությունը Տփխիսում ապահովե-

լու և մեր դիրքը Վրաստանի հանդեպ անկախ դարձնելու համար պատվիրակներին տրվեց վկայական՝ այն իմաստով, որ նոքա Տփլիսի են եկել դաշնակիցների հրավերով և գտնվում են անզլո-ֆրանսիական զինվորական միսիայի հովանավորության տակ:

Վրաստանի կառավարության հետ մի կապ ստեղծելու նպատակով Տփլիսի հասած պատվիրակները որոշեցին, որ նախագահն այցելի Վրաստանի արտաքին գործոց մինիստրին, իսկ գեներալ [Գ.] Կորգանովը՝ պատերազմական մինիստրին՝ միայն հայտնելու համար իրենց գալուստը և բնակարանի հասցեն: Այնուհետև մնում էր սպասել, որ դաշնակից հրամանատարությունը նշանակեր Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչների հանդիպումը: Իսկ մինչ այդ, քանի դեռ պարզ չէր, թե պատվիրակության մյուս անդամները երբ կհասնեն Տփլիսի, նախագահը և գեներալ [Գ.] Կորգանովը որոշեցին արդեն գործի սկսել և նախապատրաստվել դաշնակիցների քննելիք խնդիրների համար: Ուստի հրավիրվեց մի խորհրդակցություն, որին ներկա էին, բացի պատվիրակության անդամներից, նաև Փարիզի հայկական պատվիրակության<sup>6</sup> անդամներ Ավետիս Ահարոնյանը, Միքայել Պապաջանյանը, պարենավորման մինիստր Լևոն Ղուլյանը. այդտեղ էր նաև Ռոստոմը<sup>7</sup>: Այս խորհրդակցությունը որոշեց կազմել և ներկայացնել մի նախագիծ Լոռվա շրջանի ադմինիստրացիայի համար, ապա խնդրել, որ վրաց գորքերը հետ տարվեն բոլոր հայաբնակ վայրերից, քանի որ նոքա իրենց ընթացքով հուզում են ժողովրդին և ապստամբության պատճառ են դառնում, այնուհետև խնդրել, որ Սադախլոյի շրջանի թուրքաբնակ տեղերում դրվեն անզլիական գորամասեր: Այդ ուղղությամբ մի գրություն, մի քանի կարևոր դոկումենտների պատճեններով, հունվարի 3-ին տրվեց դաշնակից հրամանատարությանը:

Հունվարի 3-ին Տփլիսի հասան պատվիրակության մնացած անդամները, որից հետո ամբողջ գործունեությունը տարվել է պատվիրակության բոլոր անդամների և գեներալ [Գ.] Կորգանովի խորհրդակցությամբ՝ մինչև հունվարի 22-ը, երբ Երևան մեկնեց պատվիրակության անդամ Գրիգոր Տեր-Խաչատրյանը. նույն օրերին հրաժարվեց զինվորական խորհրդականի պաշտոնից նաև գեներալ [Գ.] Կորգանովը՝ Փարիզ մեկնելու համար: Այդ ժամանակից պատվիրակությունն իր աշխատանքները տարել է նախագահի և երեք անդամի միջոցով:

Կոնֆերանսի նիստերը սկսվեցին միայն հունվարի 9-ին: Տեղի ունեցավ ընդամենը յոթ նիստ՝ հունվարի 9, 10, 11, 13, 15, 16[-ին] և ստորագրության ու լրացումների համար՝ հունվարի 22-ին: Նախագահում էր անզլիական գնդապետ [Ռ.] Ստյոլարտը: Ուներ իր թարգմանը՝ լեյտենանտ Տիլդին, նաև մի անզլիացի սպա՝ քարտուղար: Ֆրանսիական միսիայի կողմից ներկա էին լինում կոնֆերանսին տնարար կապիտան [Ն.] Գասֆիլդը, իսկ երբեմն ֆրանսիական հյուպատոս Դյուրոուան և հայկական զինվորական մինիստրության կցորդ [Ա.] Պուադեբարը: Վրաց կողմից ներկա էին լինում Արտաքին գործերի մինիստր [Ե.] Գեգեչկորին և իր օգնական [Կ.] Մաբախտարիշվիլին, ֆինանսների մինիստր [Գ.] Ժուրուլին, պատե-

<sup>6</sup> Հայկական պատվիրակությունը մեկնում էր Փարիզ՝ մասնակցելու այստեղ գումարվող հաշտության վեհաժողովին:

<sup>7</sup> Ստեփան Զորյան (1867-1919).- Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադիրներից:

րագմական մինիստրի օգնական գեներալ [Ս.] Գեդևանովը, գնդապետ Ջափարի-ձեն, ապա [Կ.] Կանդելակին և ուրիշները: Թարգմաններն են. հայոց կողմից՝ Երվանդ Միրզայանց, իսկ վրաց կողմից՝ արտաքին գործերի մինիստրության պաշտոնյաներ, քարտուղարներ. հայոց կողմից՝ Վարդգես Ահարոնյան<sup>8</sup>, իսկ վրաց կողմից՝ արտաքին գործոց մինիստրության պաշտոնյաներ: Խոսակցության լեզուն ռուսերենն էր, որ թարգմանվում էր անզլերենի նախագահի համար, իսկ ֆրանսիական ներկայացուցիչը գիտեր ռուսերեն: Արձանագրությունը կազմում էին երկու կողմի քարտուղարները: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ խոսակցությունը լինում էր կարճ պարբերություններով, որոնք անմիջապես թարգմանվում էին նախագահի համար, քարտուղարները հնարավորություն ունեին բառացի արձանագրելու, ուստի մեր քարտուղարի կազմած արձանագրությունը, որը, թեև վավերացրած և ստորագրված չէ, կարող է կոնֆերանսում եղած վիճաբանությունների ճիշտ պատկերը համարվել: Կոնֆերանսի ընթացքում զուգահեռաբար աշխատում էին զինվորական (մեր կողմից՝ գեներալ [Գ.] Կորգանով), վարչական (մեր կողմից՝ Մարտ. Հարությունյան և Արշամ Խոնդկարյան) և ֆինանսական (մեր կողմից՝ Ստեփան Մամիկոնյան) հանձնաժողովները: Կոնֆերանսի որոշումները ստորագրվեցին ռուսերեն, ֆրանսերեն և անզլերեն: Յուրաքանչյուր կողմին հանձնվեց մի-մի օրինակ ռուսերեն և ֆրանսերեն:

Այդ կոնֆերանսում չլուծված խնդիրների քննության համար զուտ հայ-վրացական խորհրդակցության առաջին նիստը կայացավ հունվարի 29-ին, ուր, սակայն, վրաց կողմից ներկա էին, բացի արտաքին գործոց մինիստրի օգնական [Կ.] Մաբախտարիշվիլուց, երկաթուղային և փոստ-հեռագրական պաշտոնյաները: Այդ նիստում սկզբունքային համաձայնություն կայացավ ուղղակի երկաթուղային հաղորդակցություն հաստատելու Հայաստանի և Վրաստանի միջև, անմիջապես գործադրելու հայ-վրացական փոստ-հեռագրական կոնվենցիան: Երկաթուղային հաղորդակցության պայմանագիրը մշակելու համար մի մասնաժողով կազմվեց մասնագետներից՝ բաղկացած հետևյալ անձերից՝ Մաճավարիանի, Ջափարիձե, Ցկիտիշվիլի, Մանդենով, Ղուլիև, Սուլխանով, Խատիսով և Բելինիչ: Այս մասնաժողովը նիստեր ունեցավ փետրվարի 12, 14 և 18-ին և մշակեց երկաթուղային պայմանագրի մի նախագիծ, որի 19 կետերից չորսի վերաբերմամբ կողմերը ներկայացնում էին տարբեր խմբագրություն: Տարակարծության գլխավոր կետերն այն էին, որ վրաց կառավարությունը ցանկանում էր սկզբից նեթ իր սեփականությունը ճանաչել տալ այն բոլոր երկաթուղային շարժական կազմը, որը գտնվում էր 1918 թ. մայիսի 26-ին, այսինքն՝ Վրաստանի անկախ հրատարակվելու վայրկյանին, Վրաստանի հողի վրա և ինքը նշանակել նախագահ միջպետական մասնաժողովի, որը կանոնավորելու էր միջպետական երկաթուղային հաղորդակցությունը: Վրաց կառավարությունը ցանկանում էր նաև այժմյանից վարկ ստանալ այն շարժական կազմի համար, որը համարում էր իրենը, և որից պիտի օգտվեր Հայաստանը: Մերոնց կողմից առաջարկվում էր վարկի վճարման խնդիրը հետաձգել մինչև այն ժամանակ, երբ կվճռվի, թե երկաթուղային գույքն ում է պատ-

<sup>8</sup> Վ արդգես Ահարոնյան (1888–1965).– հասարակական հայտնի գործիչ, իրավաբան: Պետական-քաղաքական նշանավոր գործիչ, գրող Ավետիս Ահարոնյանի որդին է:



կանում, իսկ նախագահը կա՛մ ընտրովի լինի, կա՛մ հերթով: Վերջում վրացիք համաձայնեցին բոլոր չորս կետերի վերաբերմամբ էլ ընդունել մեր խմբագրությունը: Բայց հայ-վրացական երկաթուղային համաձայնությունը մնաց անավարտ, որովհետև անգլիական երկաթուղային միսիայի կողմից առաջարկ եղավ Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին՝ հիմնել մի կենտրոնական կոմիտե երկուական ներկայացուցչից՝ կազմված յուրաքանչյուր հանրապետությունից՝ արտակարգ լիազորություններ ունեցող անգլիացի նախագահով:

Հայ-վրացական խորհրդակցության հաջորդ նիստերը տեղի ունեցան փետրվարի 28-ին և մարտի 3-ին, որոնց որոշումները ստորագրվեցին մեր կողմից մարտի 11-ին, իսկ վրաց կողմից՝ մարտի 17-ին:

Որպեսզի հասկանալի լինի, թե՞ ինչ մթնոլորտում է աշխատել պատվիրակությունը և ի՞նչ վիճակներով են անցել տրված խնդիրները մինչև իրենց լուծումը, թող թույլ տրվի առանձնապես կանգ առնել մի քանի կետերի վրա:

Հայության վիճակը Վրաստանում. – Կովի ընթացքում, մանավանդ նրա վերջին շրջանում, հայության վիճակը Վրաստանում անտանելի էր դարձել: Մի կողմից պատճառ բերելով, որ Վրաստանի (մանավանդ Տփլիսի) հայերը պատրաստվում են ապստամբել մոտեցող հայկական զորքերին օգնություն ցույց տալու համար, մյուս կողմից՝ զինվորական տարիքի հայերին չեզոքացնելու անվան տակ, բայց իսկապես առիթից օգտվելով՝ մի հարված տալու նպատակով Վրաստանի հայությանը և հայությանը քաղաքականապես չեզոքացնելու համար թե՛ Տփլիսի առաջիկա քաղաքային ընտրությունների և թե՛ Վրաստանի սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ, վրաց կառավարությունը սկսել էր մի չտեսնված հալածանք հայերի դեմ: Պատերազմական գերի էին ճանաչվում ամեն հասակի և ամեն դասի հայեր: Բոլորին անխտիր ձերբակալում էին և լցնում բանտերը, կամ արստրում Քութայիս և այլ քաղաքներ: Բսկ ով որ չէր համապատասխանում այդ կարգին, դրանց համար հորինվեց մի ընդհանուր մեղադրանք՝ ազիտացիա Վրաց հանրապետության դեմ (“за агитацию против грузинской республики”): Բացառություններին վկայական էր տրվում, որ նա իբրև հայ ձերբակալության ենթակա չէ (“как армянин не подлежит аресту”): Առանձնապես հալածվում էին դաշնակցականները: Եվ որ տարօրինակն էր, ձերբակալությունները ոչ միայն չդադարեցին զինադադարից հետո, այլ հունվարի 5-ին հասան մի անասելի աստիճանի. Տփլիսի փողոցներում այդ օրը ձերբակալվում էր ամեն ոք, ով հայ էր և անմիջապես բանտ տարվում: Այսպիսով՝ ձերբակալվածների և արստրվածների մեջ կային թե՛ Հայաստանի, թե՛ Վրաստանի և թե՛ Ադրբեջանի ու Պարսկաստանի քաղաքացի հայեր. ծերունիներ, հոգևորականներ, հաշմանդամներ<sup>9</sup>: Բանտարկվածներ-

<sup>9</sup> Վրաստանում ՀՀ նախկին դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամայանն (1882–1940) իր հուշերում վրացական իշխանությունների կատարած աղաղակող բռնությունների բազմաթիվ օրինակներ է բերում: Հալածանքների էին ենթարկվել նաև հայ հայտնի հասարակական անհատները՝ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, ճարտարապետ Էտն Խատիսյանը, Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունուկը և ուրիշներ (տե՛ս Ա. Ջ ա մ ա լ յ ա ն. Հայ-վրացական կնճիռը. – «Հայրենիք», Բոստոն, 1929, մարտ, էջ 115–125, ապրիլ, էջ 135–139):

րին պահում էին անասելի պայմաններում՝ քաղցած, կեղտոտ, չոր հատակի վրա, նրանց ծեծում էին, անարգում, հայհոյում և, որ գլխավորն է, մինչև վերջին կոպեկը կողոպտում: Սկսվեց մի հսկայական սպեկուլյացիա և կաշատակերություն հայրսության շուրջը. բանտարկում էին և մեծ գումար փրկանք առնելով արձակում. կամ նախապես հասկացնում էին, որ եթե չի ուզում բանտարկվել, պիտի այսքան գումար տա և գումարն առնելուց հետո տալիս էին վկայական, որ «как армянин не подлежит аресту». Ամբողջ միլիցիան, հատուկ գործախառն (особый отряд)<sup>10</sup> կաշատակերությամբ էր զբաղված: Կաշառքի քանակությունը հասնում էր հարյուր ռուբլիներից մինչև տասնյակ հազարների և, այսպիսով, ամբողջ հայությունը Վրաստանում այդ օրերին մի քանի միլիոն տվեց Վրաստանի միլիցիային: Խուզարկության պատրվակով տներից գողանում էին թանկարժեք իրեր և պարենավորման նյութեր: Այս հալածանքը տարածվեց նաև գավառներում: Բուն Վրաստանի քաղաքներում և գյուղերում, ինչպես Գորի, Սդնախ, Թելավ, Գուրջասանի և այլն, տեղի ունեցան հայերի տների և խանութների թալան և ավեր: Ձերբակալություններն ու անպատվությունն այնտեղ ևս մեծ չափերի հասան, իսկ սահմանամերձ հայ գյուղերը սոսկալի վիճակի ենթարկվեցին՝ Շուլավեր, Բոլնիս-Խաչեն, Դաղթ-Խաչեն, Դամիա և մի շարք այլ գյուղեր կողոպտվեցին մինչև վերջին մարդը: Տարան նոցա ամբողջ ցորենը, գարին, գինին, տնային կարասիքը, հագուստեղենը, անասունները. մարդկանց բանտարկեցին կամ հալածական արին դեպի լեռները: Գյուղերի թալանը պետականորեն կազմակերպված էր: Դա կոչվում էր կոնտրիբուցիա<sup>11</sup> և հաճախ արվում էր գեներալ [Գ.] Մազնիևի<sup>12</sup> հրամանով. զինվորների օգնությամբ շրջանից վրացի և թուրք գյուղերի սայլերով կրեցին [հայկական] գյուղերից բոլոր հացը, խոտը, գինին և կարասիքը: Հաճախ և դրամական տուգանք էին առնում:

Այս բոլորի հետևանքը եղավ մեծ նյութական վնաս հայ ժողովրդին Վրաստանում, բարոյական ստորացում, իրավագրկություն: Գյուղերում տարածվեց սովը, առաջացավ տիֆ և այլ հիվանդություններ, բազմաթիվ եղան մահացության դեպքերը: Բանտերում և աքսորավայրերում տարածվեց բժավոր տիֆը և, կարելի է ասել, այնտեղից էլ ծավալվեց Տփխիս քաղաքում և այլ տեղեր:

Մեր դիվանագիտական միսիան փակ էր: Նրա ամբողջ գրագրությունը շատ անխնամ կերպով լցրել էին սայլերի վրա և տարել: Հայությունը օրենքից դուրս էր ճանաչված:

Ահա այս ժամանակ, երբ հայերն աքսորված էին կամ բանտարկված, կամ տներում թաքնված փողոց չէին դուրս գալիս, Տփխիս հասավ մեր պատվիրակությունը: Նրա երևալը մի տեսակ հույս ներշնչեց հայությանը: Պատվիրակությունն անմիջապես սկսեց բողոքներ ուղղել թե՛ Վրաստանի արտաքին գործոց մինիստրին և թե՛ դաշնակից հրամանատարությանը. սկսեց միջնորդություններ հարուցանել,

<sup>10</sup> Քաղաքական ոստիկանության պարտականություններ կատարող այս կառույցը կազմված էր վրացական սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամներից ու համակիրներից:

<sup>11</sup> Ռազմատուգանք:

<sup>12</sup> Լոռիում գործող վրացական զորքերի հրամանատարի պաշտոնում գեներալ Գ. Մազնիևը փոխարինել էր գեներալ Մուլուկիձեին:

պահանջներ առաջադրել և երբ կոնֆերանսում մշակվեցին գերիներին, ձերբակալվածներին և արքայազաններին ազատելու հոդվածները, պատվիրակությունն այդ հիման վրա սկսեց պահանջել, որ ժողովուրդն ազատ արձակվի, խուզարկություններն ու թալանը դադարեն: Հաճախակի դիմումներով Վրաստանի արտաքին գործոց մինիստրին, զինվորական մինիստրի օգնականին և դաշնակից հրամանատարությանը՝ աստիճանաբար հաջողվեց կյանքն իր նորմալ վիճակին վերադարձնել: Սկզբում դա դժվարությամբ էր հաջողվում. մանավանդ այն պատճառով, որ այս կամ այն միլիցիոները դեռևս իրեն դրամով բավարարված չէր համարում: Կենտրոնական կառավարության կարգադրությունը ժամանակին տեղ չէր հասնում, կա՛մ բավականաչափ կատեգորիկ չէր լինում, կա՛մ ուղղակի զանց էր առնվում: Հետզհետե սկսեցին քննություն նշանակել կաշառակերությունների, բռնությունների, բռնաբարությունների և թալանի համար: Թե՛ զինվորական և թե՛ քաղաքացիական իշխանություններից ոմանք պատժվեցին: Մարտի սկզբներին նույնիսկ քննություն նշանակվեց Շուլավերի, Բոլնիս-Խաչենի և Դաղեթ-Խաչենի «հերոսների» վրա. գյուղացիք վերադարձան իրենց տեղերը, և նրանց նույնիսկ պետական օգնություն եղավ, թեև շատ աննշան:

Օրակարգը. – Կոնֆերանսի առաջին իսկ նիստում՝ հունվարի 9-ին, մեր կողմից հարց հարուցվեց՝ կազմել կոնֆերանսի զբաղմունքների օրակարգը: Մեր կողմից առաջարկ եղավ օրակարգի մեջ մտցնել բոլոր այն հարցերը, որոնց լուծումով միայն, մեր կարծիքով, կարող էր նորմալ հարաբերություն ստեղծվել Հայաստանի և Վրաստանի միջև: Մեր առաջարկած օրակարգն էր.

- 1) Ազատ երկաթուղային հաղորդակցություն:
- 2) Ազատ փոստ-հեռագրական հաղորդակցություն:
- 3) Ազատ ներմուծություն և արտահանություն ամեն տեսակի ապրանքների երկու կողմից և ազատ տրանզիտ:
- 4) Վերացում մաքսերի, անցաթղթերի և հպատակության:
- 5) Հայկական կորպուսին և Հայոց ազգային խորհրդին պատկանող գույքի ազատ փոխադրություն Վրաստանից Հայաստան:
- 6) Հայաստանին տրվեն իրեն պատկանյալ բաժինը անդրկովկասյան բռնների<sup>13</sup>:
- 7) Իրավունք ազատ գործելու այն հաստատությունների, որոնք ամբողջ Անդրկովկասի համար ընդհանուր նշանակություն ունեն և գտնվում են Հայաստանի, Վրաստանի կամ Ադրբեջանի հողի վրա:
- 8) Պատերազմական գերիների փոխանակություն և անմիջական ազատ արձակում ձերբակալվածների և արքայազանների:
- 9) Ազատ ճանապարհ Վրաստանից և Վրաստանի վրայով գաղթականների, որոնք գտնվում են Վրաստանում և Հյուսիսային Կովկասում:
- 10) Բաժանել Վրաստանում մնացած համառուսական գույքը երեք հանրապետությունների մեջ:
- 11) Վերջին ձերբակալությունների ժամանակ սպանվածների ընտանիքի ապահովությունը:

<sup>13</sup> Անդրկովկասի պետություններում գործածվող միասնական դրամական միավոր:

Մակայն նախագահ գնդապետ [Ռ.] Ստյուարտը հայտարարեց, որ այս կոնֆերանսը չի զբաղվելու տնտեսական խնդիրներով, այլ միայն ադմինիստրացիայի, գործի քանակի և սահմանագծի հարցերով: Հետագայում, երբ մենք կրկին հարուցինք բռնների խնդիրը, Վրաստանի արտաքին գործոց մինիստրի և մանավանդ նրա օգնականի խոսքերից պարզ երևաց, որ տնտեսական հարցերը օրակարգից հանելը վրաց պահանջով է եղել:

Անգլիացիների դիրքը. – Դեռևս Ղարաքիլիսայում երևաց, որ դաշնակից հրամանատարությունը, մասնավորապես անգլիացիք, յուրացրել են մի տեսակետ, որով մենք նախահարձակ ենք ճանաչվում՝ հետևաբար և մեղավոր: Դրանով պետք է բացատրել [Ռ.] Ռայկրոֆտի և [Պ.] Շարդինիի որոշումը, որով կատարելապես տարբեր պայմաններ են տրվում մեր և վրացիների համար և միատեսակ վերաբերմունք չկար դեպի Ախալքալաքի և դեպի Լոռվա հարցերը: Մինչդեռ Լոռում մեզանից պահանջում էին հետ գնալ, Ախալքալաքում թողնում էին վրաց գործերն իրենց տեղում, Լոռում կազմում էին խառը վարչություն, իսկ Ախալքալաքում՝ վրացական՝ միայն միջազգային կոնտրոլով: Այս վերաբերմունքը երևաց նաև կոնֆերանսի ժամանակ, որտեղ հաճախ երևան էր գալիս նախնական համաձայնություն վրաց և անգլիացոց միջև: Վրաց ուլտիմատիվ պահանջները հարգվում էին, խնդիրները մեծ մասամբ լուծվում էին ըստ վրաց ցանկության: Մյուս կողմից՝ մեզ շարունակ հորդորում էին չհակառակվել, ընդունել դաշնակիցների վճիռները, չհակառակել նոցա կարգադրություններին: Մեր դիմադրությունը տհաճություն էր պատճառում նոցա. հայտարարում էին, որ մենք մեր հարաբերությամբ պատճառ ենք դառնում արյունահեղության երկարելուն, չենք թույլ տալիս խաղաղությունը շուտ վերականգնվի, երկաթուղային հաղորդակցությունը շուտ վերսկսվի: Որ մենք պատասխանատու կմնանք Փարիզի կոնֆերանսի առաջ, քանի որ չենք ուզում ենթարկվել դաշնակիցների բարձր հրամանատարության կարգադրությանը: Հորդորում էին ուշադրություն չդարձնել այն առերևույթ պարզության վրա, որը մենք կրում էինք խնդիրների այդ կերպ լուծումով, այլ հավատացած լինել, որ ամեն բան արվում է մեր բարիքի համար, ինչպես այդ կերևա ապագայում:

Իսկ պատվիրակությունը, որքան էլ սկզբունքորեն հակառակվում էր և բողոքում վճիռների միակողմանիության դեմ, այնուամենայնիվ, ի վերջո, զիջում էր դաշնակիցների պահանջին, որը համապատասխանում էր կառավարության հրահանգին: Այդպես եղավ զինադադարի պայմանները ստորագրելիս Ղարաքիլիսայում և չեզոք զոնի երկաթուղու խնդրում:

Վրաց ընթացքը. – Ինչպես պետք էր սպասել, վրաց դիրքը սկզբում դեպի մեզ շատ թշնամական էր: Կովի վերջին օրերի նոցա հաջողությունները նրանց հույս էին ներշնչել, որ եթե կոիվը չդադարեր, նոքա կարող էին իրենց կորցրածը հետ վերցնել և պատերազմը վերջացնել կատարյալ հաղթությամբ: Արդեն իսկ թե՛ պատլամենտում, թե՛ հրապարակային ժողովներում և թե՛ մամուլում նոքա ադադակում էին հաղթության մասին, որ իբր թե անգլիացոց միջամտությունն ընդհա-

տեղ նոցա հաղթական արշավը մինչև Երևան և նման բաներ: Կոնֆերանսում ե-  
 դած արտահայտություններից երևաց, որ նոքա մեզ մեղավոր են ճանաչում այն  
 բանի համար, որ մենք հոկտեմբերյան կոնֆերանսից<sup>14</sup> հրաժարվելով, չուզեցինք  
 վեճը խաղաղությամբ վերջացնել, դավաճանորեն հարձակվեցինք նոցա վրա՝ շա-  
 հագործելով նոցա հավատը և միաստությունը: Այդ իսկ պատճառով թվում էր, որ  
 ամեննին չեն մտածում այլևս մեզ հետ մի այնպիսի հարաբերություն սկսել, որով  
 մեզ ճանաչած լինեն իբրև իրենց հավասար մի ժողովուրդ: Վճռել էին օգտագործել  
 իրենց նպաստավոր աշխարհագրական դիրքը և մեզ միշտ ստորադաս վիճակում  
 պահել՝ քաղաքականապես և տնտեսապես իրենցից կախված: Գատարյալ հաշ-  
 տության մասին լսել անգամ չէին ուզում, քանի որ միլիոնների դրամական կո-  
 րուստ են ունեցել, մեծաքանակ մարդկային զոհեր են տվել և ահագին տնտեսա-  
 կան վնաս են կրել: Այդպես էր ասում [Ե.] Գեգեչկորին: Ուստի, մինչև մի որևէ բա-  
 վարարություն չստանան այդ վնասների դիմաց, հաշտության մասին խոսք չպի-  
 տի լինի: Այդ իսկ պատճառով դիմադրում էին միսիայի գործունեության վերսկս-  
 մանը. մինչև անգամ չհամաձայնեցին միսիայի շենքը բանալ, որպեսզի պատվի-  
 րակությունն այնտեղ ունենար իր նիստերը և պարապմունքները:

Այս տրամադրությունը երկար շարունակվեց և պատճառ դարձավ մեր պա-  
 րապմունքների ձգձգման, մինչև որ հանգամանքները եկան նոցա ընթացքը ար-  
 մատապես փոխելու: Նախ անգլիական հրամանատարությունը նոցա մի քանի  
 անգամ հիշեցրեց, որ հարկավոր է հայերի հետ լուծել բոլոր խնդիրները և վերա-  
 կանգնել դիվանագիտական հարաբերությունները: Ապա վրա հասավ Հա-  
 րավարևմտյան Անդրկովկասի հանրապետության հռչակումը<sup>15</sup>: Այս բանում վրա-  
 ցիք մեծ վտանգ տեսան թե՛ իրենց և թե՛ մեզ համար և զգացին շահերի նույնույն-  
 լի մեզ հետ: Այնուհետև սկսվեցին ապստամբական շարժումներ Ախալցխայում  
 և Սոչիում, նույնանման շարժման նախանշաններ երևում էին և՛ Ջաբաթալայում,  
 և՛ թուրքական Բորչալուում: Անհանգստության արտահայտություններ էր անում  
 Աբխազիան, Օսեթիան իր ինքնուրույնության ծրագրերն էր կազմում, [Ա.] Դենի-  
 կինի բանակը<sup>16</sup> սպառնական դիրք էր ընդունել: Վրաստանն իրեն զգաց կատարե-

<sup>14</sup> 1918 թ. հոկտեմբերի 27-ին Վրաստանի արտգործնախարարի պաշտոնակատար Նոյ  
 Ռամիշվիլին Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնականների հանրապետության կառավարություններին  
 առաջարկել էր ներկա գտնվել նոյեմբերի 3-ին Թիֆլիսում գումարվող խորհրդածոդովին, որը պետք  
 է լուծում տար պետությունների միջև գոյություն ունեցող խնդիրներին: Խորհրդածոդովի օրակարգը  
 վրացիները սահմանել էին առանց մյուս մասնակիցների հետ խորհրդակցելու: Այս հանգամանքով,  
 ինչպես նաև վրաց-մահմեդական հնարավոր դաշինքի պարագայում սահմանային հարցերը  
 կարգավորելիս մեկուսանալու հեռանկարով պայմանավորված՝ Հայաստանը հրաժարվեց  
 մասնակցել խորհրդածոդովին: Այն այդպես էլ պաշտոնապես չգումարվեց (տե՛ս Ռ.  
 Հ. Ն. Վ. Կ. և Ն. Ի. Վ. Հայաստանի Հանրապետություն, հ. I, Երևան, 2005, էջ 99–105):

<sup>15</sup> Խոսքը Գարսի մարզի տարածքում տեղական մահմեդականների կողմից 1919 թ. հունվարին  
 այսպես կոչված «Հարավարևմտյան Գովկասյան Հանրապետություն» (Գարսի շուրա) հռչակելու  
 մասին է:

<sup>16</sup> Խոսքը ցարական բանակի գեներալ Անտոն Դենիկինի գլխավորությամբ Հյուսիսային  
 Գովկաստում և հարակից տարածքներում գործող հակախորհրդային ուժերի մասին է: Սոչիի  
 պատկանելության և այլ հարցերում Գամալիդիական բանակը հակասություններ ուներ Վրաստանի  
 հետ: Վրացիների և անգլիացիների շրջանում տարածված էր այն կարծիքը, թե հայ-վրացական

լապես մեկուսացած, բազմաթիվ ներհակ ուժերով շրջապատված և որոշեց բավարարել հայերի պահանջները և, այսպիսով, հիմք դնել ապագա հայ-վրացական դաշնակցության: Այս վճռին մեծապես նպաստեց և միացյալ ու անկախ Հայաստանի հռչակումը Փարիզում<sup>17</sup>, որով Վրաստանի համար պարզվեց, որ ինքն այլևս դադարում է գաղթավայր լինել հայերի համար, քանի որ նոցա երեսն այժմ դեպի հարավ է ուղղվելու:

Տրամադրության այս փոփոխության արդյունք եղան գուտ հայ-վրացական նիստերը, մի շարք խնդիրների բավարարումը և մյուսների էլ բավարարելու խոստումը: Վերաբացվեց միսիան և դիվանագիտական հարաբերությունները վերսկսվեցին:

Դիվանագիտական հարաբերությունների վերսկսումը. – Պատվիրակությունն առաջնակարգ նշանակություն էր տալիս այս խնդրին. աշխատում էինք ամենից առաջ կարգել դիվանագիտական ներկայացուցիչ, որպեսզի մի շարք խնդիրներ հանձնեինք նրան և ինքներս վերադառնայինք Երևան: Մակայն ամենից շատ դիմադրության հանդիպեցինք հենց այստեղ: Վրացիք տրամադիր էին ստեղծված վիճակը խաղաղություն չհամարել, այլ զինադադար: Այդ նրանց հնարավորություն էր տալիս (պահպանելով բացառիկ օրենքներ հայերի համար) իրականացնել իրենց ներքին քաղաքական ծրագրերը: Պատվիրակության նախագահի առաջին տեսակցությունը [Ե.] Գեգեչկորու հետ պարզեց, որ Վրաստանը մտադիր չէ վերսկսել դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի հետ, այլ միայն համաձայնում է ընդունել Հայաստանի կողմից ազենտներ, որոնք հատկապես այս կամ այն գործնական խնդրի համար պիտի կարգված լինեն: Այսպես՝ նրա ասելով՝ կարող էին լինել ազենտներ պարենավորման, ֆինանսների, երկաթուղու համար և այլն: Երբ [Ե.] Գեգեչկորուն հարց տրվեց, թե ապա ո՞վ է պաշտպանելու Հայաստանի քաղաքացիների շահերը Վրաստանում, նա պատասխանեց՝ նա, ով պաշտպանում էր պատերազմի ընթացքում, այսինքն՝ պարսից հյուպատոսարանը: Մա, իհարկե, մեզ համար անընդունելի մի հարաբերության ձև էր, ուստի հունվարի 16-ի նիստում մի տեսակ համաձայնություն էր կայանում այն ձևով, որ հարաբերությունների համար նշանակում էին ազենտներ, որոնց գլուխ պիտի կանգնած լիներ մեկ անձնավորություն: Այս ձևն ավելի մոտենում էր մեր ցանկությանը. հույս կար, որ այսպիսի մարմնի իրավունքներն ապագայում հետզհետե կընդարձակվեին: Մեր առաջարկած խմբագրությունն էր. «Հարաբերությունների համար նշանակվում են ազենտներ՝ գլխավորությամբ մի անձի»

պատերազմի ժամանակ հայերը դաշնակցել են Ա. Դենիկինի հետ [մանրամասն տե՛ս Գ. Պ է տ ր ո ս յ ա ն. 1918 թ. հայ-վրացական պատերազմը և Ռուսաստանի հարավի կամավորական բանակը. – «Գանթեղ» (գիտական հոդվածների ժողովածու), 2005, № 1, էջ 120-128]:

<sup>17</sup> Խոսքը 1919 թ. փետրվարի 12-ին Փարիզում Հայաստանի Հանրապետության և Հայ ազգային պատվիրակությունների կողմից հաշտության վեհաժողովին ներկայացված հուշագրի մասին է, որով առաջարկվում էր անկախ հայկական պետությունը ստեղծել Անդրկովկասի հայկական տարածքների, արևմտահայկական վեց նահանգների և Կիլիկիայի միավորմամբ (հայկական պատվիրակությունների հուշագիրը տե՛ս Հայկական հարցը խաղաղության ժողովին առջև, Բոստոն, 1919):

(“возглавляемое одним лицом”): Վրաց խմբագրությունն էր. «ագենտներ՝ գործնական բնույթ ունեցող մասնագիտական խնդիրների համար» (“по специальным вопросам делового характера”): Այս բանաձևը, որ առաջարկում էին վրացիք, երկար ժամանակ անորոշ էր թողնում դիվանագիտական հարաբերությունների խնդիրը, ուստի վերջին փուլում, երբ պիտի ստորագրեինք որոշումները և երբ [Ռ.] Ստյուարտը հակվեց դեպի վրաց բանաձևը, մեր պատվիրակությունը գերադասեց այդ կետը բոլորովին հանել և դիվանագիտական հարաբերությունների խնդիրը բաց թողնել:

Այսպիսով՝ Հայաստանը չունեի դիվանագիտական ներկայացուցիչ Վրաստանում: Սակայն կյանքն իր պահանջն առաջադրում էր: Բազմաթիվ խնդիրների համար (թե՛ պատերազմից բխած և թե՛ ընթացիկ բնույթով) դիմում էին պատվիրակությանը, և սա հարկադրված էր իր հերթին դրանց լուծումը փնտրել կա՛մ վրաց կառավարության և կա՛մ բրիտանական միսիայի միջոցով<sup>18</sup>: Ավելի և ավելի հաճախանում էին դիմումներն ուղղակի բրիտանական միսիային, որը խնդրատուներին ուղղում էր դեպի հայկական պատվիրակությունը և մեզ հետ պայմանավորվել էր (դա իր ցանկությունն էր) հայերի վերաբերյալ դիմումներն ընդունել պատվիրակության միջոցով: Պարզ էր, որ այս վիճակը երկար տևել չէր կարող. սա որոշ անհանգստություն էր պատճառում նաև բրիտանական միսիային, որի պատասխանատու անձեր գեներալ [Ջ.] Ուոկերը և մայոր Կեմբելն այլևայլ առիթներով մեր ներկայությամբ արտահայտում էին, որ հարկավոր է դիվանագիտական հարաբերությունները վերսկսել:

Փետրվար ամսի վերջից, երևի նույն պատճառներով, վրաց կառավարությունը սկսեց այս խնդրում զիջումների ճամփան բռնել և, ի վերջո, հայտարարեց, որ համաձայն է վերաբանալ հայկական դիվանագիտական միսիան իրեն իրավունքներով<sup>19</sup>: Սակայն փետրվարի 28-ի և մարտի 3-ի նիստերում, երբ վերջնականապես ձևակերպվում էր այդ խնդիրը, վրաց ներկայացուցիչները պայման դրին, որ, համաձայն միջազգային սովորության, դիվանագիտական նախկին ներկայացուցչությունը պիտի փոխվի իր ամբողջ կազմով՝ ոչ միայն ներկայացուցիչը, այլև բոլոր խորհրդականները: Մենք հակառակեցինք խորհրդականների վերաբերմամբ և պայմանագրի մեջ որոշեցինք չհիշատակել այդ մասին, այլ բավականանալ միայն բերանացի խոստումով, որ դիվանագիտական ներկայացուցիչներ նշանակելիս երկու կողմից էլ պահվի միջազգային սովորությունը: Չմոռացանք սակայն հիշեցնել, որ [Ա.] Ջամայանին նշանակելիս մենք պահպանել ենք այդ սովորությունը, մինչդեռ Վրաստանը չի պահպանել թե՛ [Մ.] Մդիվանիին և թե՛ նրա նախորդին նշանակելիս:

Մասնավոր խոսակցությունների ժամանակ [Ե.] Գեգեկորին ակնարկել էր, որ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը չլինի ղեկավարող կուսակցութ-

<sup>18</sup> Մասնավորապես տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող, առաջաբանի և ծանոթ. հեղինակ Անուշավան Ջաքարյան, Երևան, 2005, էջ 98–99, 103–104, 106:

<sup>19</sup> Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչությունը վերաբացվել է 1919 թ. մարտի 8-ին:

յունից: Եվ, առհասարակ, նկատվում էր, որ [Ե.] Գեգեչկորին ավելի հաճույքով կրանակցեր ոչ դաշնակցական անձնավորությունների հետ, և եղավ մի շրջան, երբ պատվիրակությունը բանակցությունների համար առաջ քաշեց Ստեփան Մամիկոնյանին և Արշամ Խոնդկարյանին:

Լևոն Եվանգուլյանի<sup>20</sup> թեկնածությունն ընդունվեց առանց առարկության:

Չեզոք զոնի երկաթուղին. – Կոնֆերանսի ընթացքում մեր պատվիրակությունն ամենից ծանր վայրկյաններ ապրեց հունվարի 11-ի նիստին, երբ քննվում էր Չեզոք զոնի երկաթուղու խնդիրը: Նկատի ունենալով հայտարարությունը, որ Վրաստանի ներքին գործոց մինիստր [Ն.] Ռամիշվիլին արել էր պառլամենտում՝ այն իմաստով, որ երկաթուղին մինչև Սանահին տրվելու է Վրաստանին և ապա կոնֆերանսի ընթացքում նախագահ [Ռ.] Ստյուարտի դիրքը, պարզ էր, որ Վրաստանը նախապես հաջողեցրել էր այդ խնդիրը հոգուտ իրեն լուծել տալ: Մի շարք արտահայտություններ[ից], որ նիստի ժամանակ թույլ տվին իրենց [Ե.] Գեգեչկորին, [Կ.] Մաքախտարիշվիլին և գեներալ [Ա.] Գեդևանովը, պարզվեց, որ վրացիք պահանջել են գծի այդ մասը հանձնել Վրաստանի ճանապարհների հաղորդակցության մինիստրությանը՝ պատճառաբանելով, որ կովի ընթացքում այդ շրջանից դուրս են արված նախկին ծառայողները, որոնք պահանջում են վերադարձնել իրենց պաշտոնները, իսկ երկաթուղային մյուս պաշտոնյաները սպառնում են գործադուլ [սկսել], եթե խնդիրն այդ կերպ չլուծվի: Մյուս կողմից՝ վրաց կառավարությունը սպառնում էր չտալ վագոններ և շոգեկառքեր Հայաստանի հետ երթևեկությունը վերականգնելու համար, եթե գիծն իր ձեռքը չանցներ: Ուրեմն, ըստ երևույթին, միակ պայմանը, որով կարող էր երկաթուղային հաղորդակցությունը վերսկսվել, այդ էր: Եվ հենց այդ հանգամանքի վրա էր ծանրանում նախագահ [Ռ.] Ստյուարտը, երբ վրաց պահանջն ընդունելի էր հայտարարում:

Մենք առարկեցինք, որ դա կատարելապես անընդունելի է մեզ համար. նախ, որովհետև դրանով խախտվում է զոնի չեզոքությունը, ապա, որ Լոռու ազգաբնակչությունը կկարծի, թե վերադառնում է նախկին վրացական իշխանությունը, և հուզմունք առաջ կգա: Եվ վերջապես, որ ամենից կարևորն է, դրանով Վրաստանին հնարավորություն է տրվում իր նպաստավոր դիրքը մեր նկատմամբ ի չարը գործադրել և այդպիսի սպառնալիքներով ապագայում էլ մեզանից կորզել նորանոր արտոնություններ և իրավունքներ իր համար: Մեր անհամաձայնությունը, առարկությունները և բողոքը ոչ մի արդյունք չտվին. նախագահը հայտարարեց, որ ինքը խնդրի միակ բանավոր<sup>21</sup> լուծումը գտնում է նրանում, որ կատարվի վրաց կողմի պահանջը:

Մենք մեզ իրավունք չհամարեցինք ընդունել խնդրի այդ կերպ լուծումը և ընդմիջում խնդրեցինք, որից հետո դուրս բերինք հետևյալ բանաձևը. «Նկատելով, որ անդրկովկասյան երկաթուղիների գույքը համակովկասյան սեփականություն է, որ ոչ մի պետություն իրավունք չունի այն դարձնել իր բացառիկ սեփականությունը,

<sup>20</sup> Լ. Եվանգուլյանը նշանակվեց Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ:

<sup>21</sup> Բարը գործածված է «բանական» իմաստով:



որ Վրաստանի կառավարության պահանջը՝ նրան հանձնել Չեզոք գոնի երկաթուղիների վարչությունը, ինչպես միակ պայման թույլատրելու երկաթուղային ապարատի կանոնավոր գործառնությունն այդ գոնում, արմատապես հակասում է դեկտ[եմբերի] 25-ին դաշնակիցների կայացրած վճռի տառային իմաստին,

որ հարցի այդ կերպ որոշումը մեր ժողովրդի կենսական շահերին ներհակ է ընթանում և չի ապահովում մեր պետությանը նույնանման հակաօրինական և անարդար պահանջներից ապագայում, Պատվիրակությունն իրեն իրավունք չի համարում ընդունել այդպիսի պայմանները և հարցի լուծումը թողնում է դաշնակից հրամանատարությանը»:

Եվ երբ նախագահը խնդիրն ըստ վրաց պահանջի լուծելուց հետո, հայտարարելով, որ ինքը հրահանգ ունի խնդիրն այդպես լուծելու, մեզ առաջարկեց, որ հեռագրվի Հայաստանի կառավարությանը, որ կարգադրություն լինի այդ վճռի իմաստով, մենք հրաժարվեցինք՝ պատճառաբանելով, որ այդ վճռին չենք մասնակցել, ուստի և չենք կարող հեռագրել. թող հեռագրվի բրիտանական միսիայի կողմից:

Պատերազմի մեղավորը. – Կոնֆերանսի առաջին նիստի վերջում [Ե.] Գեգեչկորին հարց հարուցեց և խնդրեց նախագահին<sup>22</sup>, որ մի հատուկ մասնաժողով նշանակի՝ քննելու համար, թե ո՞վ է այս զինված ընդհարման մեղավորը և ծախսերը դրվեն մեղավոր կողմի վրա: Թվում է, թե վրացիք այդ առաջարկն արեցին համոզված լինելով, որ Հայաստանը նախապես պատրաստվել է և, օգտվելով դաշնակիցների մուտքից դեպի Կովկաս, պայմանավորվել է Կամավորական բանակի հետ՝ միասին հարձակվելու Վրաստանի վրա: Այդ նպատակով էլ նա խուսափել է մասնակցել Անդրկովկասի հանրապետությունների կոնֆերանսին: Մյուս կողմից՝ սա մի միջոց էր հետ ստանալու այն մեծաքանակ գումարները, որ Վրաստանը ծախսել էր այդ զինված ընդհարման ժամանակ և ապա կանխելու մեր պահանջները թե՛ համառուսական գույքի բաշխման վերաբերմամբ և թե՛ մանավանդ սեկվեստրի<sup>23</sup> ենթարկած 13.600.000 ռուբլու և [Հայկական] կորպուսի գույքի վերաբերմամբ: Նույն նիստում մեր պատվիրակության նախագահն իր կողմից նույնպես պաշտպանեց այդ առաջարկը: Այնուհետև կոնֆերանսի վերջին փուլում՝ հունվարի 17-ին, մեր կողմից կրկնվեց այդ խնդիրը, բայց վրաց կողմից՝ ոչ: Հետագայում մի տեսակցության ժամանակ, որ տեղի ունեցավ մեր պատվիրակության նախագահի և անգլիական միսիայի քաղաքական [մասի] վարիչ մայոր Կեմբելի միջև, վերջինիս խոսքերից պարզվեց հետևյալը. բրիտանական միսիան, ընդառաջ գնալով երկուստեք արտահայտված ցանկությանը և մեր առաջարկն արդեն համաձայնության նշան ընդունելով, դիմել է Վրաստանի կառավարությանը՝ ունենալով և նրա համաձայնությունը: Վրաստանի կառավարությունը հայտնել է, որ նախքան իր վերջնական խոսքն ասելը նա ուզում է տեսակցություն ունենալ գեներալ [Ջ.] Ուոկերի հետ, բայց այդ տեսակցության համար նա մինչև վերջն էլ ոչ մի քայլ չի արել:

<sup>22</sup> Այսինքն՝ կոնֆերանսը նախագահող Ռոբերտ Ստյուարտին:

<sup>23</sup> Արգելակալանքի:

Կարելի է կարծել, որ վրաց կառավարությունը վերջում իր հայացքը փոխեց՝ միգրացիոն համոզվելով, որ քննության արդյունքը կարող է իր համար այնքան էլ նպաստավոր չլինել: Մանավանդ այդ պարզվեց մարտի 3-ի նիստի ժամանակ, երբ [Ե.] Գեգեչկորին մի տեսակ հանդիմանորեն դիմեց մեզ՝ ասելով, որ մենք բրիտանական միսիայից խնդրել ենք քննություն կատարել: Կարիք եղավ նրան հիշեցնելու, որ այդ հարցն առաջին նիստում ինքն է հարուցել:

[Հայկական] կորպուսի գույքը և 13.600.000 ռուբլու խնդիրը. – Վրաստանը սկզբում ցանկանում էր [Հայկական] կորպուսի գույքի սեկվեստրի ենթարկած գումարների վերադարձնելու խնդիրը կապել մեղավորության խնդրի հետ: Ապա մի քանի անգամ, երբ մենք պնդում էինք մեր իրավունքի վրա՝ հետ ստանալու այդ գույքը և գումարները, վրաց ներկայացուցիչներն ակնարկություն արին գերի ընկած զրահակիր զնացքների մասին: Բայց ոչ մի անգամ զրահակիրների խնդիրն իբրև ձևավորված առաջարկ չարին ոչ կոնֆերանսի և ոչ էլ խորհրդակցության ժամանակ:

Մակայն ամեն անգամ, երբ մենք հարուցանում էինք գույքի և գումարների խնդիրը, թե՛ [Ե.] Գեգեչկորին և թե՛ [Ն.] Ռամիշվիլին պնդում էին, որ լավ է այդ խնդիրները հետաձգենք, որովհետև այդ խնդիրները կհանգարեն համաձայնության գալուն, և միշտ կրկնում էին, որ կստանանք, բայց այժմ մոմենտը հարմար չէ: Եվ եթե վերջին պայմանագրով նոքա համաձայնեցին վերադարձնել կորպուսի ամբողջ գույքը, իսկ ռազմանյութերի մասին հատուկ համաձայնություն կայացնել, պատճառը հավանորեն այն է, որ այդ ռազմանյութերը ծախսել են և անմիջապես վերադարձնել չեն կարող: Նույնը պիտի ասել և 13.600.000-ի մասին. այդ գումարը, անշուշտ, ծախսված է, իսկ այժմյան ֆինանսական ճգնաժամին Վրաստանն ուղղակի հնարավորություն չունի վերադարձնելու:

Մակայն հատկապես այդ գումարի մասին կոնֆերանսի IX<sup>2</sup> կետում ասված է, որ Հայաստանի և Վրաստանի կառավարությունները, եթե դրա նկատմամբ համաձայնության չգան, կարող են դիմել դաշնակիցների արբիտրաժին: Պատվիրակությունը, համաձայնելով այս խնդիրը բաց թողնել և անգամ պայմանագրի մեջ չհիշատակել (մարտի 11–17-ին ստորագրած), որ համաձայնություն չկայացավ, կամեցավ երրորդ ուժի միջամտությամբ հատկ[ապես] տրամադրությունը չխանգարել, որոշեց զեկուցել կառավարությանը և այդ գումարի ստացման ձևի որոշումը թողնել նրան:

Բռնների խնդիրը. – Մա միակ տնտեսական խնդիրն էր, որի քննությանը կոնֆերանսում Վրաստանը դիմադրություն ցույց չստացավ: Պատճառը պարզ էր. Վրաստանը դրամի մեծ կարիք ուներ: Նա, անշուշտ, այդ խնդրում էլ մեզ հետ համաձայնության չէր գա, եթե Ադրբեջանը բացասական դիրք բռնած չլիներ դեպի բռնների նոր էմիսիան: Ադրբեջանից հուսահատված՝ Վրաստանը համաձայնեց մեզ հետ միասին բռնների չորրորդ էմիսիա ունենալ. թեկուզ դրանով նա հարկադրված էր ֆինանսապես ուժեղացնել և Հայաստանը: Եվ որպեսզի հնարավորություն ունենա չորրորդ էմիսիայից 80 միլիոն ստանալ, նա համաձայնեց, որ Հայաստանը

ստանա երրորդ էմիսիայից իրեն հասանելի 80 միլիոնը և կրկին 80 միլիոն չորրորդից:

Բանակցությունների երկարելու պատճառը. – Պատվիրակության աշխատանքները տևեցին երեք ամիս: Դրա պատճառներն էին՝ ամենից առաջ այն, որ վրացիք ցանկություն չունեին խնդիրներն արագությամբ լուծելու: Սկզբում, երբ նոցա տրամադրությունը հաշտության կողմը չէր, նոքա երկարացնում էին նիստերի միջոցները և, առհասարակ, ցանկություն չէին արտահայտում մի վերջաբանի հանգելու: Վերջում, երբ նոցա տրամադրությունը փոխվեց, սկսեցին արագությամբ խնդիրները լուծել: Պարզ է, որ եթե ցանկանային, սկզբից արագությամբ կվերջացնեին բոլոր հարցերը: Ապա մյուս գլխավոր պատճառն այն էր, որ, մինչդեռ մեր կողմի պատվիրակները հատկապես գնացել էին և, ազատ ամեն տեսակ աշխատանքներից, միայն իրենց գործով էին զբաղված, վրաց կողմից պատվիրակության մեջ մասնակցում էին պետության բարձր պաշտոնատար անձինք՝ մինիստրներ և օգնականներ, որոնք միաժամանակ զբաղված էին և իրենց ընթացիկ գործերով: Մինչդեռ մենք լիազորություն ունեինք խնդիրները լուծելու մեր հայեցողությամբ, վրացիք հաճախ հարցը կիսատ էին թողնում՝ հայտարարելով, որ այդինչ հարցի լուծման համար կամ այդ կերպ լուծման համար, լիազորված չեն, ուստի պիտի հարցը դնեն կառավարության քննությանը: Չկամությունից զատ շատ հաճախ նոքա իսկապես ժամանակ չէին ունենում, որովհետև հենց այդ ժամանակաշրջանում Վրաստանում տեղի ունեցան անցքեր, որոնք, իրոք, շատ էին զբաղեցնում կառավարության անդամներին: Այսպես՝ Սոչիի և Ախալցխայի կռիվները, Սահմանադիր ժողովի ընտրությունը և բացումը և այլն: Մեր պատվիրակության դրությունն անհարմար էր. շաբաթներով սպասում էինք, որ վրաց պատվիրակները ժամանակ ունենային նիստերի գալու: Մեզ համար այս անպատվաբեր դրության հանդեպ մենք հաճախ բողոքում էինք: Բայցնայնպես մեզ մնում էր կա մը ընդհատել բանակցությունները և վերադառնալ՝ գործի ավարտում մի ուրիշին թողնելով և միզուցե մենք այդպես էլ անեինք, եթե դիվանագիտական ներկայացուցչի հարցը լուծված լիներ դրական կերպով, կա մը թե չէ՝ շարունակել և գործը հասցնել մի վախճանի: Սակայն նկատելով, որ մեր պատվիրակությունը Տփլիսում այդ ժամանակ հանդիսանում էր միակ ներկայացուցիչը Հայաստանի թե՛ վրաց կառավարության և թե՛ դաշնակիցների հանդեպ, մյուս կողմից էլ պատվիրակության հեռանալով թե՛ Հայաստանի և թե՛ առհասարակ հայ ժողովրդի վերաբերյալ գործերը մնում էին երեսի վրա, ապա և այն, որ մեր հեռանալով կոնֆլիկտը չէր վերանում, այլ գուցե նորոգվեր, պատվիրակությունը ձայների մեծամասնությամբ գերադասեց մնալ և ավարտել գործերը. գոնե այնքան ժամանակ, մինչև որ հաստատվի դիվանագիտական ներկայացուցիչ:

Պատվիրակությունն իր ամբողջ կազմով Տփլիս է հասել հունվարի 3-ին: Հունվարի 9-ին սկսվել են կոնֆերանսի նիստերը, որի որոշումները ստորագրվել են հունվարի 22-ին, ապա հայ-վրացական խորհրդակցության առաջին նիստը, որից, սակայն, Վրաստանի կողմից մասնակցում էին երկաթուղային և փոստ-հեռագրական պաշտոնյաներ, եղել է հունվարի 29-ին: Այդ նիստում որոշ-

վել է ընտրել երկաթուղային մասնաժողով, որի նիստերը տեղի են ունեցել փետրվարի 12, 14 և 18-ին: Այս մասնաժողովն իր գործերը վերջացրել է և նախագիծը ստորագրել փետրվարի 20-ին: Ամբողջ փետրվարի ընթացքում շարունակ դիմումներ են եղել [Ե.] Գեգեչկորուն, որ նիստերը շարունակվեն: Մերժում երբեք չենք ստացել, բայց զանազան պատճառներով գործը գլուխ չէր գալիս, մինչև որ փետրվարի 28-ի և մարտի 3-ի հայ-վրացական խորհրդակցության նիստերում լուծվեցին բոլոր խնդիրները: Չուտ հայ-վրացական նիստերի որոշումները մենք ստորագրել ենք մարտի 11-ին, երբ հազիվ պատրաստվեցին դարձյալ նույն պատճառներով, իսկ վրացիք ստորագրած մեզ հանձնեցին միայն մարտի 17-ին: Այդ նույն օրը պատվիրակության երկու անդամը՝ Սմբատ Խաչատրյանը և Արշամ Խոնդկարյանը, ճանապարհվեցին Երևան: Նախագահը մնաց դրամ ստանալու և պատվիրակության հաշիվները փակելու համար: Դրամը ստացվեց միայն մարտի 19-ին: Նույն այդ օրը նախագահը մնացած գործերը հանձնեց դիվանագիտական միսիային: Դրանից հետո առաջին անգլիական գնացքը հինգշաբթի՝ մարտի 20-ին, չմեկնեց շոգեկառքի բացակայության պատճառով: Հաջորդ գնացքով երկուշաբթի՝ մարտի 24-ին, մեկնեց նախագահը և Երևան հասավ մարտի 26-ին:

Այդպիսով՝ պատվիրակությունը հակառակ իր կամքի էր հարկադրված այդքան երկար մնալ Տփլիսում:

Դիվանագիտական միսիային թողված գործեր. – Պատվիրակությունը Տփլիսից հեռացավ, երբ արդեն դիվանագիտական միսիան իր գործունեությունը սկսել էր, և դիվանագիտական ներկայացուցիչ [Լ.] Եվանգուլյանը պաշտոնի էր անցել: Նրան թողնվեց ավարտելու համար հետևյալ գործերը.

- 1) Տրանզիտի պայմանագիր կապել:
- 2) Ռազմանյութերի ստացման համար հատուկ համաձայնություն կայացնել:
- 3) 13.600.000-ի խնդիրը, կառավարությունից հրահանգ ստանալով, նորից հարուցանել:
- 4) Եթե անգլիական երկաթուղային միսիային չհաջողվեց մի կենտրոնական վարչություն ստեղծել բոլոր անդրկովկասյան երկաթուղիների համար, կնքել հայ-վրացական երկաթուղային պայմանագիր:
- 5) Մի շարք մանր և ընթացիկ խնդիրներ ավարտել, որոնք սկսված են պատվիրակության օրով:

Ցանկություններ. – Փետրվարի 28-ի նիստին, նախքան գործնական-տնտեսական խնդիրներին անցնելը, [Ն.] Ռամիշվիլին առաջարկեց մի որևէ ակտով ճանաչել փոխադարձ անկախությունը: Նա պատճառաբանում էր այդ նրանով, որ վրաց հասարակական կարծիքը և կառավարությունը հիմքեր ունեն կարծելու, որ հայերը դեմ են Վրաստանի անկախությանը և ամեն կերպ աշխատում են նրա դեմ: Իբրև ապացույցներ նա բերում էր նախ ընդհանրապես այն անբարյացակամ դիրքը, որ բռնել է հայությունը առհասարակ և Վրաստանի հայությունը մասնավորապես դեպի Վրաստանը: Հայոց մամուլը ամեն տեղ միայն նրանով է զբաղված, որ քննադատում է և ագիտացիա անում Վրաստանի անկախության դեմ: Այդպես է ոչ

միայն Տիխիսի հայ մամուլը, այլև Բաքվի, Կ. Պոլսի: Ռոստովում [Գ.] Չախուշյանն<sup>24</sup> այդ ուղղությամբ է գրում ռուս[ական] թերթերում: Հայերը Սոչիի կողմում կռվում են վրաց զորքերի դեմ<sup>25</sup>, Վրաստանի մեջ կամուրջներ են պայթեցնում և այլն: Անհրաժեշտ է, որ Հայաստանի կառավարությունը միջոցներ ձեռք առնի և վերջ տա դրան: [Ն.] Ռամիշվիլիի առաջարկն այն էր, որ անմիջապես՝ հենց մեր դեկտեմբերին, այդ ակտը կատարել և Հայաստանի կողմից, իբրև լիազորված, ճանաչել Վրաստանի անկախությունը. նույն կլիներ և Վրաստանի կողմից:

Մենք ասացինք, որ տարօրինակ ենք գտնում այդ կարծիքը, որ իբր թե մենք դեմ ենք Վրաստանի անկախությանը և մանավանդ, որ իբր թե ազիտացիա ենք մղում նրա դեմ: Մենք արդեն ապացույցներ տվել ենք, որ ճանաչել ենք Վրաստանի անկախությունը. 1918 թվականի մայիսի 25-ին, երբ Վրաստանի ազգային խորհուրդը հրավիրեց Հայոց ազգային խորհրդի անդամներին և հայտնեց, որ մտադիր է հաջորդ օրը հայտարարել Վրաստանի անկախությունը, առաջինը Հայոց ազգային խորհրդի նախագահն էր՝ Ավետիս Ահարոնյանը, որ շնորհավորեց և հաջողություն ցանկացավ: Այնուհետև Վրաստանը՝ չի կարող մի փաստ անգամ ցույց տալ, որ Հայաստանի կառավարությունը կամ նրա պառլամենտը, կամ հենց ամենամեծ կուսակցությունը՝ Դաշնակցությունը, որն է գործ կատարած լինի հակառակ Վրաստանի անկախության: Վրացիք սխալ են կարծում, որ աշխարհիս բոլոր անկյունների հայությունը ղեկավարվում է Հայաստանի կառավարության ցուցմունքներով. մենք շատ ենք կտրված Բաքվից, Ռոստովից, Կ. Պոլսից, որ հնարավորություն ունենանք նոցա ղեկավարել: Եթե հայ ժողովրդի մեջ կա երբեմն մի տրամադրություն հակառակ Վրաստանի, դա էլ առաջանում է նրանից, որ նա նկատեց՝ այն օրվանից, երբ Վրաստանն անկախ դարձավ, հայ ժողովրդի դրությունն ավելի ծանրացավ. նրա ճանապարհները փակվեցին, նրա դեմ ճնշումներ սկսվեցին և այլն: Դա Վրաստանի ներքին քաղաքականության արդյունքն է: Սոչիում, ինչպես և Լոռիում հայերը ոտքի էլան վրաց դեմ շնորհիվ վրաց վարչության և զորքի բռնությունների: Վրաստանն այն ուղղությամբ պիտի տանի իր ներքին և արտաքին քաղաքականությունը, որ նա սիրելի դառնա հայ ժողովրդի համար: Մեր պատվիրակությունը լիազորված չէ Վրաստանի անկախությունը ճանաչող մի ակտ հրատարակել. եթե վրացիք, այնուամենայնիվ, դա անհրաժեշտ են գտնում, պատվիրակությունը հայտարարում է, որ ինքը դրան հակառակ չի և այդ ուղղությամբ կաշխատի Երևան վերադառնալով: Ամենահարմար ձևը գուցե կլինի մի շնորհավորական հեռագիր կամ նոտա [ուղարկելը], որը մարտի 12-ին՝ Սահմանադիր ժողովի օրը, կկարդացվեր:

<sup>24</sup> Գրիգոր Չախուշյան (1861–1931).– հասարակական հայտնի գործիչ, իրավաբան: 1919 թ. նշանակվել է Դոնում ՀՀ ներկայացուցիչ: Հեղինակել է Հայկական հարցի վերաբերյալ մի շարք ուսումնասիրություններ:

<sup>25</sup> Հալածվելով 1918 թ. ամռանը Սոչին գրաված վրացական զորքերից՝ Հյուսիսային Կովկասի հայերն աջակցում էին Վրաստանի դեմ թշնամաբար տրամադրված Ա. Դենիկինի Կամավորական բանակին:

Համաձայնություն կայացավ, որ այդ ուղղությամբ առաջարկ կլինի մեր կողմից Հայաստանի կառավարությանը:

Մյուս հարցը, որն այդ օրը շոշափվեց, սահմանների խնդիրն էր: [Ն.] Ռամիշվիլին ցանկանում էր, որ մեր պատվիրակությունն այդ հարցն էլ լուծեր: Մենք հայտարարեցինք, որ դրանում էլ լիազորված չենք՝ մանավանդ որ սահմանների խնդիրը վերապահված է Փարիզի խաղաղության կոնֆերանսին: [Ն.] Ռամիշվիլին հայտարարեց, որ Վրաստանն ամեննին դեմ չէ, որ Հայաստանի սահմանները հարավից և արևմուտքից այնպես անցնեն, որ Հայաստանը էլք ունենա դեպի Սև ծով՝ Ռիզե կամ մի այլ տեղ: Թեև իրենց ազգայնական շրջաններն այդ վայրերը Վրաստան են ճանաչում, սակայն դեկավարող կուսակցությունը<sup>26</sup> ոչ միայն դրան դեմ չէ, այլև կաջակցի հայերին այդ խնդրում: Եվ ցանկություն էր հայտնում, որ առաջիկա կոնֆերանսին զուգահեռաբար տեղի ունենա հայ-վրացական խորհրդակցություն, որը լուծի բոլոր վիճելի խնդիրները Հայաստանի և Վրաստանի միջև: Մեր կողմից միայն մասնավոր կարծիքներ հայտնվեցին, որ հենց այն շրջանները՝ Լոռին և Ախալքալաքը, որոնց շուրջը վիճում ենք մենք, խիտ հայաբնակ շրջաններ են, ուստի մենք չենք կարող զիջել, քանի որ մեր ժողովուրդն այդ տեղ է ապրում: Մանավանդ Լոռվա մասին խոսք չի կարող լինել: Գուցե Ախալքալաքը դեռ կարելի լինի զիջել այն դեպքում, երբ վիլայեթները տրվեն Հայաստանին<sup>27</sup> պայմանով, որ Ախալքալաքի գավառի հայ ժողովուրդը տեղափոխվի Հայաստանի մի վայր: Մենք էլ համաձայն ենք, որ վեճերը վերջանան մեր մեջ առանց դրսի ուժի միջամտության, սակայն լավ է, որ մեր խորհրդակցությունը լինի ոչ թե առաջիկա կոնֆերանսին զուգահեռաբար, այլ նրանից առաջ:

Այսպիսով՝ բոլորովին թշնամական մթնոլորտում սկսված հայ-վրացական կոնֆերանսը վերջացավ խաղաղված տրամադրությամբ, որը հիմք է տալիս կարծելու, որ այսուհետև Հայաստանի և Վրաստանի միջև ծագած վեճերն այլևս կլուծվեն ոչ թե զենքի ուժով, այլ բանակցություններով:

Նախագահ պատվիրակության՝ Մարտ. Հարությունյանց  
անդամներ՝ Ս. Խաչատրյան  
Գ. Տեր-Խաչատրյան  
Ա. Խոնդկարյան

<sup>26</sup> Այսինքն՝ վրացական սոցիալ-դեմոկրատները (մենչեիկներ):

<sup>27</sup> Խոսքը թուրքական տիրապետության տակ գտնվող արևմտահայկական նահանգների մասին է, որոնց նկատմամբ Հայաստանը հավակնություն ուներ: